Ս. ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆՕՐՀՆԵՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ



ԿԱՌՈՒՑՎԵԼԻՔ ԵԿԵՂԵՑՈՒ ԳԾԱԳՐԵՐԸ

ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՁԵՌԱՄԲ ԿԱՏԱՐՎԵՑ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԻ Ս. ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 4-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր գահակալության 4-րդ տարեդարձի օրը, մեկնեց Արարատի մարզ՝ կատարելու Մասիս քաղաքում կառուցվող Ս. Թադեոս եկեղեցու հիմքերի օրհնությունը: Հայոց Հայրապետի շքախմբում էին Հունաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան արքեպս. Գալփաքյանը, Բրազիլիայի հայոց թեմի առաջնորդ Տ. Տաթև արքեպս. Ղարիբյանը, Տ. Փառեն եպս. Ավետիքյանը, Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս. Միրզախանյանը, հոգեշնորհ հայրեր, սարկավագներ:

Արարողությանը մասնակցեցին նաև ՀՀ ԱԳ նախարար Վարդան Օսկանյանը, ԱԺ պատգամավորներ, Արարատի մարզպետ Ալիկ Սարգսյանը, ԳԱԱ նախագահ Ֆադեյ Սարգսյանը, Մասիսի քաղաքային իշխանության ներկայացուցիչներ և բազմաթիվ մասիսցիներ:

Ս. Թադեոս եկեղեցու հիմքերը դրվել են դեռևս 1991 թ.՝ այն ժամանակ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդ Գարեգին արքեպս. Ներսիսյանի օրհնությամբ: Այսօր արդեն Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի ձեռամբ վերասրբագործվեցին եկեղեցու հիմքերը՝ ազդարարելով ընդհատված շինարարական աշխատանքների սկիզբը: Ս. Թադեոս եկեղեցին, որը կլինի Հայաստանի ամենամեծ եկեղեցիներից մեկը, կառուցվելու է տեր և տիկին Հրանտ Վարդանյանների բարերարությամբ՝ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի միջոցով: Եկեղեցու ճարտարապետներն են բարեհիշատակ Արթուր Թարխանյանն ու նրա դուստրը՝ Անահիտ Թարխանյանը:

Հավարտ օրհնության հավատացյալ ժողովրդին իր հայրապետական խոսքն ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ բարձր գնահատելով նաև բարերաների եկեղեցասիրությունը:

«Եկեղեցաշինությունը հայրենաշինություն է: Որովհետև 1700 տարիներ շարունակ մեր ժողովրդի զավակունք կարողացել են պաշտպանել հողը հայրենի շնորհիվ լուսավորչահաստատ մեր հավատքի: Կարողացել են դիմագրավել ամեն փորձություն շնորհիվ առ Աստված ունեցած հավատքի: .... Մենք գոհություն ենք վերառաքում երկինք, որպես Հայրապետ Հայոց, որ Տերը արժանի դարձրեց Մեզ կատարել վերասրբագործումը այս եկեղեցու Հովվապետական Մեր գահակալության 4-րդ տարում: Աղոթք ենք առ Աստված բարձրացնում, որպեսզի Տերը իր օրհնության ներքո խաղաղ և անվրդով պահի ազգս հայոց», - ասաց Վեհափառ Հայրապետը՝ պատգամելով ներկաներին հավատարիմ մնալ մեր հայրերի սուրբ հավատքին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ